**Արամ Հակոբյան**

Ծնվել է 1989թ. մայիսի 10-ին, Երևանում։

**Կրթությունը՝**

| | |
|---|---|
| 2005-2009թթ. | Երևանի պետական համալսարան, քաղաքագիտության բաժնի բակալավրիատ, |
| 2009-2011թթ. | Երևանի պետական համալսարան, քաղաքագիտության բաժնի մագիստրատուրա, |
| 2011թ. | Թաֆթս համալսարանի Ֆլեթչերի դիվանագիտության և իրավունքի դպրոց, Մեդֆորդ, Մասաչուսեթս, ԱՄՆ։ |

**Աշխատանքային գործունեություն՝**

| | |
|---|---|
| 2010-2012թթ. | ՀՀ ԱԳՆ հյուպատոսական վարչության կցորդ, |
| 2012-2015թթ. | Կանադայում ՀՀ դեսպանության կցորդ, ապա՝ երրորդ քարտուղար, |
| 2015-2017թթ. | ՀՀ ԱԳՆ Եվրոպայի վարչության Եվրոպայի խորհրդի բաժնի երկրորդ քարտուղար, |
| 2017-2021թթ. | Եվրոպայի խորհրդում ՀՀ մշտական ներկայացուցչության երկրորդ քարտուղար, ապա՝ ՀՀ մշտական ներկայացուցչի տեղակալ, |
| 2021-2023թթ. | ՀՀ ԱԳՆ Բազմակողմ քաղաքականության և զարգացման համագործակցության վարչության ՄԱԿ-ի և կայուն զարգացման բաժնի պետի պաշտոնակատար, |
| 2023-2024թթ. | ՄԱԿ-ում ՀՀ մշտական ներկայացուցչության խորհրդական։ |

*2024թ. ապրիլի 25-ին ՀՀ նախագահի հրամանագրով նշանակվել է Միավորված ազգերի կրթական, գիտական և մշակութային կազմակերպությունում Հայաստանի Հանրապետության մշտական ներկայացուցիչ։*

**Օտար լեզուների իմացություն՝**

Անգլերեն, ռուսերեն։

**Ընտանեկան կարգավիճակ՝**

Ամուսնացած է, ունի մեկ դուստր։